Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Քարինջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (18 դասաժամ), ֆիզկուլտուրայի (6 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), տեխնոլոգիայի տղաների խումբ (2 դասաժամ) և աղջիկների խումբ (2 դասաժամ), երաժշտության (2 դասաժամ), հայոց լեզվի և գրականության (5 դասաժամ), անգլերենի (14 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թ. հունիսի 19-ից մինչեւ հունիսի 30-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. հուլիսի 6-ին՝ ժամը 15:00-ին,** ՀՀ Լոռու մարզի Քարինջի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Լոռու մարզ, գ. Քարինջ, 7 փող., շենք 15:

Տեղեկությունների համար զանգահարել (077) 73-42-32 հեռախոսահամարով: